



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15934 գործարքներ, որոնց քանակը 2011թ. սեպտեմբերի համեմատ աճել է 4.2%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 3.3%-ով:

2011թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4190 օտարման գործարքների 77.5%-ը կազմել են առուվաճառքները, 22.1%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. հոկտեմբերին, 2011թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 5.0%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ աճել՝ 7.1%-ով:

2011թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. հոկտեմբերին, 2011թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.1%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 7.5%-ով:

2011թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2010թ.	հոկտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2011թ.
Կենտրոն	447600	436100	436200
Արաբկիր	366100	342000	337900
Քանաքեռ-Զեյթուն	278800	265900	265600
Նոր-Նորք	229000	227700	222100
Ավան	237900	248900	250500
Էրեբունի	244200	226700	232100
Ծենցավիթ	242400	233400	228900
Դավթաշեն	268200	253000	256300
Աջափնյակ	229200	226500	222800
Մալաթիա-Սեբաստիա	232300	223100	224500
Նուբարաշեն	149000	140100	144200
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	265900	256700	256500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հոկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. սեպտեմբերի համեմատ, աճել են 0.1%-ով:

2011թ. հոկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 368 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. սեպտեմբերի համեմատ, նվազել է 11.3%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 4.9%-ով:

2011թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2010թ.	հոկտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	142200	125600	128400
	Ապարան	45800	52700	52700
	Թալին	57100	66100	66100
Արարատ	Արտաշատ	97900	96200	98100
	Մասիս	135400	107800	109800
	Վեդի	95700	91200	91200
	Արարատ	84900	77200	79600
Արմավիր	Վաղարշապատ	160600	141200	138900
	Արմավիր	125600	112600	113300
	Մեծամոր	85600	76500	77600
Գեղարքունիք	Սևան	95700	90700	90000
	Գավառ	48200	54500	54800
	Մարտունի	87100	96400	96400
	Վարդենիս	32000	33500	34600
	Ճամբարակ	20300	25500	25500

Լոռի	Վանաձոր	93200	86700	88200
	Ստեփանավան	60100	74500	74500
	Սպիտակ	83600	97900	96800
	Ալավերդի	33500	38100	36800
	Տաշիր	37100	49300	48200
	Թումանյան	6200	13300	13300
	Շամլուղ	3400	9800	9400
	Ախթալա	14400	23100	22100
Կոտայք	Աբովյան	152200	143100	140300
	Նոր Հաճն	134600	126600	124200
	Բյուրեղավան	106700	104100	107400
	Եղվարդ	111500	114700	112200
	Հրազդան	63800	60700	59000
	Ծաղկաձոր	177500	201500	196200
	Չարենցավան	78100	73400	71800
Շիրակ	Գյումրի	119600	103300	105500
	Արթինկ	63000	63200	63200
	Մարալիկ	30300	37500	37000
Սյունիք	Գորիս	138500	118500	120700
	Կապան	104900	97100	98200
	Սիսիան	83000	86200	89000
	Մեղրի	61500	74100	75200
	Ագարակ	34600	45500	44400
	Քաջարան	61100	69100	70700
	Դաստակերտ	8000	8000.0	8000
Վայոց Ձոր	Վայք	71800	79700	79100
	Եղնիզաձոր	110500	110100	106000
	Ջերմուկ	121200	114000	116200
Տավուշ	Դիլիջան	107700	99700	102400
	Իջևան	134800	119800	118600
	Բերդ	42200	53500	52000
	Նոյեմբերյան	34300	43300	43300
	Այրում	24100	32000	31500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. սեպտեմբերի համեմատ, մնացել են անփոփոխ :

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 475 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում` 109, մարզերում միասին վերցրած` 366: 2011թ. հոկտեմբերին, 2011թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.3%-ով, ընդ որում Երևանում նվազել է 18.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել` 2.5%-ով: 2010թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.8%-ով, ընդ որում Երևանում նվազել է 0.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել` 16.2%-ով:

2011թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները` հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2010թ.	հոկտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2011թ.
Կենտրոն	479700	455000	452100
Արաբկիր	395700	368000	363500
Քանաքեռ-Զեյթուն	295100	276000	275600

Նորք Մարաշ	281800	300300	295200
Ավան	252300	257200	253800
Էրեբունի	254700	233000	238400
Ծննդավիթ	258300	243500	237000
Դավթաշեն	284800	265000	268400
Աջափնյակ	248400	238000	236000
Մալաթիա Սեբաստիա	249700	233000	233400
Նուբարաշեն	150300	145800	150100
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286400	274100	273000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. սեպտեմբերի համեմատ աճել են են 0.4%:

2011թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2010թ.	հոկտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	148800	130100	133400
	Ապարան	48800	55100	55100
	Թալին	59100	67000	67000
Արարատ	Արտաշատ	102600	102700	104800
	Մասիս	139000	113700	115300
	Վեդի	100400	95300	95300
	Արարատ	89300	88200	85300
Արմավիր	Վաղարշապատ	168600	168200	162200
	Արմավիր	130700	115100	117800
Գեղարքունիք	Սևան	100700	95000	94000
	Գավառ	51200	56600	56900
	Մարտունի	90300	97100	97100
	Վարդենիս	34300	38300	38300
	Ճամբարակ	22400	28400	28400
Լոռի	Վանաձոր	100000	98000	97100
	Ստեփանավան	63800	79100	77500
	Սալիտակ	86900	108000	106200
	Ալավերդի	36200	39600	38200
	Տաշիր	40300	54000	52000
	Թումանյան	10800	13900	13900
	Շամլուղ	7500	11500	11000
Կոտայք	Աբովյան	168400	150000	146400
	Նոր Հաճն	139500	132000	132000
	Բյուրեղավան	111200	109000	109000
	Եղվարդ	120200	120000	118200
	Հրազդան	67900	65000	63100
	Ծաղկաձոր	319000	309500	320500
	Չարենցավան	81100	75700	75000
Շիրակ	Գյումրի	130100	119700	117200
	Արթիկ	65100	67000	66900
	Մարալիկ	32800	39000	38000

Սյունիք	Գորիս	144400	126500	128900
	Կապան	107800	100900	102000
	Սիսիան	85600	89500	92400
	Մեղրի	63600	76200	76200
	Ագարակ	35900	46200	46200
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	75300	82200	82200
	Եղեգնաձոր	114400	118500	114000
	Ջերմուկ	123400	117200	119400
Տավուշ	Դիլիջան	112900	105400	108200
	Իջևան	139600	129700	128400
	Բերդ	44500	57000	54800
	Նոյեմբերյան	36200	46000	46000
	Այրում	26000	33300	33300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. սեպտեմբերի համեմատ, աճել են 0.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1383 միավոր /798.97 հա/ հողեր, որից Երևանում՝ 73 միավոր /6.76 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 680 միավոր /695.16 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /2.93 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 490 միավոր /76.98 հա/, որից Երևանում՝ 48 միավոր /3.27 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 175 միավոր /7.76 հա/, որից Երևանում՝ 20 միավոր /0.56 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 10 միավոր /16.02 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 22 միավոր /2.56 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 6 միավոր /0.50 հա/:

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1206 միավորի /710.20 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 59 միավոր /5.12 հա/, նվիրատվության գործարքներ՝ 167 միավորի /86.03 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /1.65 հա/ և փոխանակության գործարքներ՝ 10 միավորի /2.74 հա/:

Հանրապետությունում 2011թ. հոկտեմբերին, 2010թ. հոկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.1%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 5.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 52.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 235.61 հա, որից 230.08 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 28.9%-ը կամ 348 գործարքներ /219.40 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 5 գործարք /0.21 հա/, իսկ 70.4%-ը կամ 849 միավորը /490.67 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 52 միավոր /4.90 հա/: 2011թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /0.13 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված

հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոլոգիայի համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	3	0.17	2	0.03	3	2.41	0	0.00	33	2.00	16	0.49
Արագածոտն	25	20.00	1	0.37	1	0.25	9	0.61	52	33.87	0	0.00	21	2.66	2	0.05
Արարատ	38	74.01	1	0.01	23	2.15	42	0.75	36	11.89	0	0.00	55	4.60	2	0.12
Արմավիր	7	58.22	2	0.08	0	0.00	3	0.11	126	171.86	0	0.00	47	4.89	5	0.46
Գեղարքունիք	4	0.74	0	0.00	1	0.04	3	0.09	19	22.05	1	11.69	16	2.06	1	0.43
Լոռի	6	1.06	2	0.14	6	0.39	9	0.05	44	35.73	0	0.00	21	35.89	8	0.21
Կոտայք	15	33.33	1	0.19	41	3.31	12	0.26	103	65.11	2	3.55	95	8.45	14	0.75
Շիրակ	6	12.08	0	0.00	17	0.45	15	0.57	11	13.95	0	0.00	7	0.69	1	0.02
Սյունիք	6	5.53	0	0.00	1	0.02	3	0.18	31	25.64	0	0.00	14	0.91	3	0.10
Վայոց Ձոր	3	1.02	0	0.00	0	0.00	5	0.20	12	20.48	0	0.00	5	0.38	2	0.16
Տավուշ	0	0.00	0	0.00	10	0.75	1	0.003	33	6.24	0	0.00	5	0.36	0	0.00
Ընդամենը	110	205.99	7	0.79	103	7.53	104	2.85	470	409.23	3	15.24	319	62.89	54	2.79

Ստորև ներկայացվում է 2011թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոլոգիայի համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	3	0.16	0	0.00	1	0.13	2	0.03	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	0	0.00
Արագածոտն	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	35	21.23	25	20.00	1	0.37	1	0.25	8	0.61
Արարատ	6	0.23	0	0.00	1	0.07	5	0.16	98	76.69	38	74.01	1	0.01	22	2.08	37	0.59
Արմավիր	2	0.032	1	0.03	0	0.00	1	0.002	10	58.37	7	58.22	1	0.05	0	0.00	2	0.10
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.85	3	0.72	0	0.00	1	0.04	3	0.09
Լոռի	7	0.22	1	0.07	1	0.12	5	0.03	16	1.42	6	1.06	1	0.07	5	0.27	4	0.02
Կոտայք	7	0.16	0	0.00	2	0.14	5	0.02	61	36.62	14	33.01	1	0.19	39	3.17	7	0.25
Շիրակ	10	0.47	0	0.00	4	0.04	6	0.43	27	10.83	5	10.28	0	0.00	13	0.41	9	0.14
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	5.73	6	5.53	0	0.00	1	0.02	3	0.18
Վայոց Ձոր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	7	1.22	3	1.02	0	0.00	0	0.00	4	0.20
Տավուշ	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	10	0.733	0	0.00	0	0.00	9	0.73	1	0.003
Ընդամենը	38	1.30	2	0.10	10	0.52	26	0.68	283	213.73	107	203.85	5	0.69	93	7.01	78	2.18

Հանրապետությունում 2011թ. հոկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք /2.14 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. հոկտեմբերին, 2010թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 26.9%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 60.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 28.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 44.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 6.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 9.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	22	18.59	37.4	2643.0	498.6	32	14.51	365.0	12000.0	4232.8
Ապարան						7	1.82	86.5	2727.3	672.5
Թալին	3	1.41	269.4	294.0	277.6	11	8.42	93.6	5494.5	556.2
Ծաղկահովիտ						2	9.12	79.5	1000.0	225.3
Արարատի մարզ										
Արտաշատ	10	17.08	68.7	1050.0	238.4	9	1.51	335.1	10833.3	2589.5
Մասիս	14	32.80	61.3	1002.5	251.1	14	5.90	200.0	11904.8	3064.5
Վեդի	14	24.12	72.0	2937.7	1805.1	13	4.49	207.0	10795.1	1716.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	13.82	63.0	63.3	63.2	64	46.84	294.3	9090.0	1551.6
Բաղրամյան	4	44.03	70.9	70.9	70.9	26	98.58	90.6	2561.1	743.6
Վաղարշապատ	1	0.37	3387.1	3387.1	3387.1	36	26.44	444.4	11764.7	2880.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	0.96	199.8	1875.0	384.3
Ճամբարակ								60.5	953.3	320.0
Մարտունի	1	0.36	677.7	677.7	677.7	7	2.17	51.1	2850.0	710.0
Սևան	2	0.36	1221.0	1221.0	1221.0			52.2	2134.8	305.0
Վարդենիս						9	18.93	41.2	2575.1	348.4
Լոռու մարզ										
Այվերդի	3	0.44	1091.6	2442.0	1991.9	2	0.72	170.4	6424.2	722.5
Գուգարք	1	0.02	10000.0	10000.0	10000.0			234.6	6065.9	795.0
Սպիտակ	2	0.59	90.1	812.0	451.0	2	0.23	250.0	5555.5	718.3
Ստեփանավան						2	2.41	90.6	1686.6	287.6
Տաշիր						10	3.65	45.3	1384.4	139.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	17.59	69.4	1767.0	890.7	35	15.73	279.3	11942.7	4750.0
Եղվարդ	8	15.42	77.6	1215.5	420.5	46	36.40	174.4	11971.8	3040.0
Հրազդան						14	7.22	130.5	10256.4	2065.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	3.00	373.0	373.0	373.0	3	7.61	252.0	1693.1	587.7
Ամասիա	2	2.18	118.7	357.0	237.8			40.9	261.0	130.0
Անի	1	2.10	269.1	269.1	269.1	6	4.57	110.6	546.9	362.5
Աշոցք	1	3.00	112.5	112.5	112.5	1	0.86	58.5	215.8	118.0
Արթիկ						1	0.92	79.4	1428.6	358.0
Սյունիքի մարզ										
Գորիս						7	5.88	92.6	1023.2	681.5
Կապան	5	2.28	93.5	266.3	163.2	4	3.42	120.0	841.6	325.5
Մեղրի	1	3.24	650.0	650.0	650.0	4	1.22	193.0	3000.0	700.0
Սիսիան						16	15.13	46.3	1977.4	470.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	1.02	68.8	69.4	69.0	10	19.68	125.0	10000.0	1858.5
Վայք						2	0.80	58.8	1430.7	595.2

Տավուշի մարզ										
Բերդ						31	3.98	213.3	3783.8	655.2
Իջևան								267.5	9454.5	1215.3
Նոյնմբերյան						2	2.26	46.7	7368.4	815.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատնաքննից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						15	16491.0	130.7	22200.0	2572.6
Ագարան	1	2500.0	330.0	330.0	330.0	4	7473.0	124.1	609.6	347.5
Թալին						2	2670.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ								60.0	214.3	85.0
Արարատի մարզ										
Արտաշատ	19	18805.0	351.3	444.4	358.7	8	8970.0	173.9	7140.3	894.0
Մասիս	3	2000.0	578.0	822.5	738.9	36	25716.0	187.5	25000.0	1213.1
Վեդի						11	11323.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						21	25173.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	230.0
Վաղարշապատ						25	22501.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3660.0	186.6	1084.3	615.3
Ճամբարակ						4	3479.0	71.3	2286.2	149.3
Մարտունի	1	432.0	124.3	124.3	124.3	7	8790.0	119.3	5000.0	277.0
Սևան								240.0	3110.4	295.0
Վարդենիս						1	4695.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի	2	74.0	609.5	977.5	793.5	2	2200.0	114.3	1388.9	215.3
Գուգարք	3	2595.0	80.0	84.0	81.3	2	1577.0	77.9	14083.3	1032.3
Մայիտակ						14	349514.0	104.9	1348.3	204.2
Ստեփանավան						2	4360.0	88.2	1666.7	175.3
Տաշիր								45.3	400.0	89.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						42	35609.4	264.5	35353.5	1960.0
Եղվարդ	38	30767.0	1267.0	1292.0	1283.7	37	33027.0	173.6	27000.0	2840.0
Հրազդան	1	980.0	4750.2	4750.2	4750.2	13	13735.0	117.7	34848.5	1321.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	1229.0	1335.7	10184.8	4733.6	5	5131.4	113.6	18750.0	331.7
Ամասիա	2	999.0	150.0	150.0	150.0			45.3	274.7	71.0
Անի	1	400.0	500.0	500.0	500.0			67.9	180.6	156.0
Աշոգք								40.8	144.0	62.0
Արթիկ	2	1425.4	158.4	850.5	504.5	2	1720.0	111.8	5000.0	216.5

Սյունիքի մարզ										
Գորիս						7	3941.0	112.2	1700.0	370.5
Կապան	1	220.5	2608.9	2608.9	2608.9	3	2595.0	67.9	2638.9	290.0
Մեղրի						4	2549.0	68.5	632.9	185.6
Սիսիան								123.5	875.0	190.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3521.0	96.7	7659.6	497.8
Վայք						1	321.0	120.7	1448.3	198.2
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	109.0
Իջևան	8	6972.0	158.4	3000.0	1966.0	4	2720.0	74.1	14423.1	515.7
Նոյնեմբերյան	1	320.0	246.9	246.9	246.9	1	860.0	125.0	1948.1	217.4

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 10 գործարք 1.36 հա մակերեսով, Կոտայքի մարզում:

2011թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 656 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 88.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. հոկտեմբերին, 2011թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 12.9%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 14.9%-ով:

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 36 բնակարանների, 30 անհատական բնակելի տների, 329 հասարակական, 55 արտադրական նշանակության օբյեկտների, 194 միավոր /567.98 հա/ հողերի և 12 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 10 վարձակալության գործարքների /այդ թվում 6 միավոր՝ 0.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 23.1%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 61.5%-ով: 2011թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 567.98 հա հողերից 0.81 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 567.16 հա հողերից 127.45 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 213.08 հա, որից 212.58 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում վարձակալվել են 407.74 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	4	212.58
Արարատ	5	44.88
Արմավիր	20	69.90
Գեղարքունիք	3	6.03
Լոռի	4	5.53
Կոտայք	2	2.66
Շիրակ	2	3.47
Սյունիք	21	19.49
Վայոց Ձոր	5	5.99
Տավուշ	8	37.21
Ընդամենը	74	407.74

2011թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2120 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. սեպտեմբերի համեմատ, աճել է 4.8%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 6.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.2%/, առանձնատների /26.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.2%/ և հողերի /12.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 969 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. սեպտեմբերի համեմատ, աճել է 2.3%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 17.2%-ով:

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 262.49 հա հողեր, որից 4.86 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 87.2%-ը կամ 228.89 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.06 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 143.69 հա, որից 142.79 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 209 գործարքներ, որից 153-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 81.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 14.4%-ն՝ անհատական բնակելի տների, 0.5%-ը՝ այգետնակների, 1.0%-ը՝ արտադրականան նշանակության օբյեկտների և 2.9%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ: 2011թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.5%-ով, ընդ որում Երևանում աճել է 6.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 3.4%-ով: 2010թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 52.6%-ով, ընդ որում Երևանում՝ 56.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 43.6%-ով:

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման 1 /Սյունիքի մարզում/ գործարք է արձանագրվել, որի քանակը 2011թ. սեպտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 66.7%-ով:

2011թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2881 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. սեպտեմբերի համեմատ աճել է 11.0%-ով, իսկ 2010թ. հոկտեմբերի համեմատ՝ 13.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /28.3%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե